



## ԾԱՂԻԿՆԵՐ-ԾԱՂԻԿՆԵՐ

## ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ժամանակին գեղեցիկ պարտեզի մը մէջ տարբեր տեսակի ծաղիկներ կային՝ վարդեր, շուշաններ, երիցուկներ, արեւածաղիկներ եւ շատ ուրիշներ: Բոլորն ալ տարբեր գոյներով ու չափերով էին, բայց համերաշխ կ'ապրէին միասին՝ վայելելով արեւն ու անձրեւը, որոնք իրենց աճումին կ'օգնէին:

Օր մը Լիլի անունով փոքրիկ աղջիկ մը պարտեզ կու գայ: Ան ծաղիկները կը սիրէ եւ կը հիանայ, թէ որքա՛ն գեղեցիկ են անոնք: Ան կը սկսի շրջիլ պարտեզին մէջ՝ հրապուրուած այդ ծաղիկներով:

Ան կը նկատէ, որ կարգ մը ծաղիկներ տխուր տեսք ունին: Անոնց թերթիկները կախուած էին, իսկ գոյները միւսներուն պէս վառ չէին: Ինքն ալ կը տխրի եւ կ'երթայ պարտիզպանին մօտ ու կը հարցնէ անոր. «Ի՞նչ պատահած է այս ծաղիկներուն, ինչո՞ւ անոնք այսքա՛ն տխուր են»:

Պարտիզպանը կը ժպտի ու կ'ըսէ. «Այս ծաղիկները բաւարար ջուր ու արեւուն լոյսը չեն ստացած: Ինչպէս մենք, նոյնպէս ալ անոնք կարիքը ունին սնունդի, ջուրի եւ արեւուն ճառագայթներուն՝ առողջ ապրելու համար»:

Լիլին կ'ուզէ օգնել ծաղիկներուն, ուստի՝ պարտիզպանը անոր ցոյց կու տայ, թէ ինչպէ՞ս պետք է ջրէ զանոնք: Ջրելու ատեն կը դիտէր, թէ անոնք որքա՛ն կը հրճուէին: Անոնց գոյները կը պայծառանային եւ թերթիկները կը բացուէին:

Ծաղկազարդը գարնանային բացօթեայ տօնախմբութիւններու սկիզբը ազդարարող եկեղեցական եւ ժողովրդական տօն է:

2 ա տ ի կ է ն մ է կ շ ա բ ա թ ա ռ ա շ կը կատարուի նշելու «Զրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ»:

Ծաղկազարդին հայոց եկեղեցիները արմաւենիի տերեւներով կը զարդարուին: Առաւօտեան կը կատարուի ժամերգութիւն, որմէ ետք օրհնուած ձիթենիի ճիւղեր կը բաժնուին եկեղեցի այցելող ժողովուրդին: Ձիթենիի ճիւղերը կը խորհրդանշեն բարիք, առատութիւն, խաղաղութիւն եւ պտղաբերութիւն:

Ծաղկազարդը հռչակուած է նաեւ մանուկներու օրհնութեան օր, որովհետեւ երբ Յիսուս Երուսաղէմի տաճար կը մտնէր, մանուկները կ'աղաղակէին ըսելով. «Օրհնութի՛ւն, Դաւիթի որդիին»: Այդ օր մանուկները կը հագնին իրենց տօնական հագուստները, փոքրերը զարդարուն մոմերով եկեղեցի կ'ուղղուին եւ թափօրին կը մասնակցին:

Ծաղկազարդի տօնէն ետք, Երկուշաբթին մինչեւ Ս. Յարութեան տօն «Աւագ Շաբաթ» կը կոչուի:




Ծ ա ղ ի կ ն եր ու ն ի ն ա մ ք ը շարունակելով, Լիլին կը սորվի, թէ որքա՛ն կարեւոր է բոյսերուն հոգատարութիւնը: Ան կը հասկնայ, որ ինչպէս մարդիկ, նոյնպէս ալ ծաղիկները սիրոյ եւ խնամքի կարիքը ունին:

Այդ օրուընէ ի վեր, Լիլին ամեն օր պարտեզ կ'երթայ՝ ծաղիկները ջրելու եւ անոնց աճը դիտելու համար: Իսկ ծաղիկները միշտ ալ շ ն ո ի հ կ ա լ ո թ ի ո ն կը յայտնեն անոր՝ իրենց քաղցր բուրմունքը տարածելով:

ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՅ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵԱՆ-ՇԱՀԻՆԵՆ  
ՆԿԱՐԱԶԱՐԴԵՅ՝ ՈՒՅՅԻ ԲԵՇՈՇԵՆ






= 9



= 1



= ?

Կրկա՞ն լուծել:


Պատասխան: 4



Գունաւորե՛ պատկերը, որոշուած գոյներուն համաձայն:

1-բաց մոխրագոյն  
2-գոց կապոյտ

3-կարմիր  
4-գոց մոխրագոյն




- 1 -
- 2 -
- 3 -
- 4 -

Ի՞նչ է ճիշդ պատասխանը:

	+		+		=	9
	+		+		=	5
	+		+		=	15
	+		+		=	?

Պատասխան: 11



Փխսկին մէջէն անցնելով, փորձե՛ գտնել ելքի ճամբան:



# ԱՆՔԱՆ ՀՈՒՐԻՆ

Յովհաննես Թումանյան

Կար ու չկար կին մը կար: Այս կինը աղջիկ մը ուներ անունը՝ Հուրի:  
Հուրին ծոյլ եւ անշնորհք աղջիկ մըն էր, որ մինչեւ իրիկուն պարապ  
կը նստեր ու կ'երգեր.

*«Գործն ի՞նչ ընեմ՝ աղտոտ է,  
Բամպակը կորիզոտ է,  
Ծամօն պետք է որ ծամեմ,  
Տանիքը հանգիստ ընեմ,  
Անցնողը մտիկ ընեմ,  
Ուտեմ, խմեմ  
Մութին ննջեմ»:*

Հարեւանները անունը  
կը դնեն անբան Հուրի, մինչ  
մայրը, տունէ տուն աղջկան  
գովքը կ'ընէ,- բամպակ մանող,  
հանգոյց ընող, նաեւ քակող,  
ձեւող-կարող, շաղող թխող,  
եփող-թափող, մէկ խօսքով  
ինքը՝ Հուրի, մատները՝ ոսկի:

Այս գովասանքը կը հասնի  
երիտասարդ վաճառականի մը  
ականջը, որ կ'ըսէ.

*«Իմ ուզածս ալ ճի՛շդ աս է»:*  
Աճապարանքով կ'երթայ եւ  
անբան Հուրիին ձեռքը  
կը խնդրէ, կը պսակուի անոր  
հետ եւ կը տանի գայն իրենց  
տունը:

Ատեն մը ետք, տասը-քսան  
շալակ բամպակ կ'առնէ,  
կը տանի կնոջը ու կ'ըսէ. *«Ես  
հեռու տեղ պիտի երթամ  
առուտուրի համար, դուն ալ  
այս բամպակը մաքրէ՛, մանէ՛,  
վերադարձիս տանիմ, ծախեմ, հարստանանք»:*

Անբան Հուրին ձիւթ ծամելով կը պտտի: Օր մըն ալ, գետեզերքէն անցած  
ատեն կը լսէ որ գորտերը կը կռկռան.

- Փեփէ՛լ... Կեկէ՛լ... Փեփէ՛լ... Կեկէ՛լ...  
- Աղջիկ Փեփէ՛լ, Կեկէ՛լ,- ձայն կու տայ անբան Հուրին,- եթէ բամպակը բերեմ  
ձեզի տամ, կը մաքրե՞ք:  
- Բե՛ր, բե՛ր, բե՛ր...,- կ'ըսեն անոնք:  
Անբան Հուրին կ'ուրախանայ: Կ'երթայ բամպակը կը բերէ, կը նետո գետը.

- Ահա՛ մաքրեցե՛ք: Քանի մը  
օրէն ետ կու գամ, մանածը  
կը տանիմ, որ ծախենք:

Կ'երթայ, քանի մը օրէն ետ  
կու գայ:

Գ ո Ր տ ե Ր ը դ ա Ր ձ ե ա լ  
կը կռկռան.

- Փեփէ՛լ... Կեկէ՛լ... Փեփէ՛լ...  
Կեկէ՛լ...

- Աղջիկ Փեփէ՛լ, Կեկէ՛լ,  
մանածը բերե՛ք,- կ'ըսէ Հուրին:

Գորտերը կը շարունակեն  
կռկռալ եւ մանածը չեն բերեր:  
Յանկարծ Հուրիին աչքին  
կը զարնէ գետի ափերուն եւ  
քարերուն փաթթուած կանաչ  
մամուռը:


- Վա՛յ, կ'ըսէ,- աս ի՞նչ բան է,  
տե՛ս, թե՛ մաքրեր ու մաներ են եւ  
թէ իրենց համար գորգ հիւսեր են:  
Ձեռքը ճակատին կը դնէ,  
կը պոռայ.

- Քանի որ գորգ հիւսեր էք, մեր  
բամպակին դրամը բերե՛ք: Յետոյ՝  
նոտամանները կը հանէ եւ ջուրը  
կը մտնէ: Յանկարծ ոտքը կը դաչի  
կարծր բանի մը: Կը հանէ,  
կը տեսնէ որ կտոր մը ոսկի է:


Փեփէլին ու Կեկէլին շնորհակալութիւն կը յայտնէ, ոսկիին կտորը փէշին մէջ  
կը պահէ ու տուն կ'երթայ:

(Շարունակելի)





# ԼՈՒԻԿԸ



Լուիկը կը համարուի աշխարհի ամենատարածուած եւ արժեքաւոր բանջարեղէններէն մէկը: Ան կ'օգտագործուի տարբեր տեսակի կերակուրներու մէջ՝ եփած, խորոված, թարմ, ինչպէս նաեւ թթուաշի ձեւով:

Լուիկը կ'օգտագործուի նաեւ պահածոներու մէջ: Անկէ կարելի է պատրաստել լուիկի մածուկ (Ketchup), թացաններ եւ այլն:

Մեծ տարածում ունի նաեւ լուիկին հիւթը, որ կենսանիւթերով հարուստ զովացուցիչ եւ սննդարար խմիչք մըն է չափահասներու, երեխաներու համար:

Լուիկը օժտուած է բարձր յատկութիւններով: Ան հարուստ է կենսանիւթերով (A, B, C,) եւ հանքային աղերով:

